

ԺԵՏՄԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՆԵՆՈՒՄ

ԱՆԿՐԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ներհակության դրսևորումներից մեկը ժխտման հարաբերությունն է՝ Վերջինս արտահայտվում է շարահյուսական մակարդակի ստորոգային և ոչ-ստորոգային ենթամակարդակներում։ Երբ այն գործառվում է ոչ-ստորոգային ենթամակարդակում, կաղմվում է բաղմակի անդամներով պարզ նախադասություն, իսկ ստորոգային ենթամակարդակում արտահայտվելու դեպքում՝ ժխտման հարաբերությամբ բարդ համադասական նախադասություն։ Առաջին դեպքում ժխտման հարաբերությամբ կապվում են պարզ նախադասության բաղմակի անդամները՝ կապակցվելով ժխտման շաղկապներով։ Օրինակ՝ «Նրան տանջում էր ոչ ղինվորի կյանքի կորուստը, այլ ազատության ղինվորի դժբախտությունը...» (ԴԴՎ, 429)։ «Բայց նա հաջողություն շնորհեց ոչ թե հորը, այլ որդուն» (ԲՄ, 537)։ Ստորոգային ենթամակարդակում արտահայտվելիս ժխտման հարաբերությունը կապվում է ստորոգման հետ, դործառվում է ստորոգյալների միջև՝ կաղմելով ժխտման հարաբերությամբ բարդ համադասական նախադասություն։ Ընդ որում, երբ ժխտման հարաբերությունը գործառվում է միևնույն առարկային կամ առարկաներին վերագրվող հատկանիշների միջև, կաղմվում է ընդհանուր ենթակայով բարդ համադասական կամ միավորյալ նախադասություն, իսկ տարբեր առարկաների ու դրանց ստորոգական հատկանիշների միջև արտահայտվելու դեպքում՝ նույն հարաբերությամբ տարբեր ենթականերով բարդ համադասական կամ ոչ-միավորյալ նախադասություն։

Բարդ համադասական նախադասության նման տարբերակման հիմունք ենք ընդունում ենթակայի ընդհանուր կամ տարբեր լինելը հետևյալ պատճառներով։ Նախ՝ ենթական նախադասության գլխավոր անդամներից մեկն է, հետևաբար նրա ընդհանուր կամ տարբեր լինելն իբրև բարդ համադասական նախադասության տարբերակման հիմունք դիտելը շատ կարևոր է։ Երկրորդ՝ ենթակայի ընդհանուր կամ տարբեր լինելը պայմանավորում է նաև ստորոգման յուրահատկությունը։ Այն, թե բաղադրիչ նախադասությունների՝ ստորոգային (կամ ստորոգվող) հատկանիշները վերագրվում են նո՛ւյն առարկային (ենթակային), թե՞ տարբեր առարկաների (ենթակաների), ունի էական նշանակություն։ Մյուս կողմից՝ քանի որ ստորոգումը նախադասության ամենահիմնական հատկանիշն է, ուստի նրա յուրահատկությունը հավասարապես դառնում է նաև նախադասության կառուցվածքային առանձնահատկություն։ Այսպիսով, բարդ համադասական նախադասության մեջ ենթակայի ընդհանուր կամ տարբեր լինելը չի մնում իբրև սոսկ ենթակայի յուրահատկություն, այլ տարածվում է նաև ստորոգման վրա՝ դառնալով նախադասության կառուցվածքային ընդհանուր հատկանիշ։ Ըստ այդ հատկանշի էլ բոլոր կարգի բարդ համադասական նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ ա) ընդհանուր ենթակայով նախադասություններ, բ) տարբեր ենթականերով նախադասություններ։

Առաջին դեպքում ենթական կամ ենթակաները (եթե դրանք բաղմակի են) սովորաբար արտահայտվում են առաջին բաղադրիչում (սակավադեպ էլ հաջորդ բաղադրիչում), բայց հավասարապես վերաբերում են բոլոր բաղադրիչներին։ Ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասության մեջ բաղադրիչ նախադասությունների ստորոգային հատկանիշները

հավասարապես վերադրվում են ընդհանուր ենթակային կամ ենթականերին, իսկ համապատասխան շարահյուսական հարաբերությունները գործառվում են միայն ստորոգյալով հատկանիշների միջև. ինչպես՝ «Այս անգամ նա դուրս չվազեց, այլ նստեց խոտի վրա» (ԱԲ, 194): Այս կարգի բարդ համադասական նախադասությունների հայ շարահյուսագիտության պատմության մեջ հայտնի են միավորյալ նախադասություն անվանումով: Դրանք ըստ էության բազմակի ստորոգյալներով կազմված նախադասություններ են: Մենք մեր շարադրանքում պահպանում ենք ավանդական տերմինը՝ միավորյալ նախադասություն անվանումը:

Տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության բաղադրիչներից յուրաքանչյուրն ունենում է իր ենթական: Շարահյուսական հարաբերություններն էլ արտահայտվում են բաղադրիչ նախադասությունների ինչպես ստորոգյալների, այնպես էլ ենթակաների միջև. ինչպես՝ «Ոչ թե դուք եք նրան հրավիրել, այլ ինքն է եկել»:

Ինչ վերաբերում է համադասական հարաբերության տարբեր դրսևորումներին (միավորական, ներհակական, տրոհական, հավելական և այլն), դրանք (որոշ յուրահատկություններով հանդերձ) արտահայտվում են թե՛ միավորյալ և թե՛ տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասությունների մեջ:

Ժխտման ճառաբերությամբ միավորյալ նախադասությամբ առաջնայնություն է միեռնույն առաջնային կամ առաջնաբերին վերագրվող ճատկանիշներից մեկի (կամ մի քանիսի) ժխտումը և մյուսի (կամ մյուսների) ճատկանությունը: Օրինակ՝ «Այնուամենայնիվ Թորգոմն այդ օրը իշխանի մոտից տուն չգնաց, այլ շտապեց Հովսեփի և Վարդանի մոտ» (ՍԶ, 318):

Ժխտման հարաբերությամբ միավորյալ նախադասությունը նույն հարաբերությամբ տարբեր ենթականերով համադասական նախադասությունից տարբերվում է ամենից առաջ ստորոգման յուրահատկությամբ: Միավորյալ նախադասության մեջ ժխտման ներհակությամբ հակադրվում են միևնույն առարկային կամ առարկաներին վերագրվող տարբեր հատկանիշները, իսկ տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության մեջ՝ տարբեր առարկաներն իրենց ստորոգական տարբեր հատկանիշներով: Հմմտ. 1. «Մեծ Տիկինը շնայեց նրան, այլ գլուխը կախած, մտասույզ և լուրջ շարժվեց դեպի կանանց գունդը» (ԴԴ, 505): 2. «Ոչ թե մենք ենք աշխատանքը շուտ սկսել, այլ պարզապես դու ես ուշացել»:

Այնուհետև ի տարբերություն տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության, միավորյալ նախադասությանը բնորոշ չէ բաղադրիչ նախադասությունների ենթակաների միջև գործառվող ժխտումը, քանի որ ենթական, այս կառուցվածքում ընդհանուր անդամ լինելով, երկրորդ բաղադրիչում հակադրության եզր չունի: Այսպես, թե՛ վերևի նախադասություններից առաջինում հակադրված են ստորոգյալներն իրենց լրացումներով, և հակադրության ծիրից դուրս է ենթական, ապա երկրորդում հակադրված են նաև ենթակաները (մեք←→դու):

Ժխտման հարաբերությամբ միավորյալ նախադասություններն ունեն կառուցվածքային ու իմաստային մի քանի առանձնահատկություններ: Դրանք ըստ հիմնական բաղադրիչների դրսևորման լինում են միակազմ և երկկազմ (միակազմներն էլ՝ հիմնականում բայական դիմավոր): Նման միավորյալ

Հայ (և ոչ միայն հայ) լեզվաբանության պատմության մեջ միավորյալ նախադասության մասին եղած տարակարծությունները հիմնականում վերաբերում են երկկազմ կառուցվածքին (միակազմ միավորյալ նախադասությունները ցարդ առանձին քննության առարկա չեն դարձնել): Մենք երկկազմ միավորյալ ենք դիտում ա) մեկ ենթակայով ու բազմակի ստորոգյալներով և բ) բազմակի ենթականերով ու բազմակի ստորոգյալներով կազմված նախադասությունները: Առաջին դեպքում տարբեր հատկանիշներ վերագրվում են միևնույն առարկային (ինչպես՝ «Նա ունկնդրում է երգը և հուզվում»), իսկ երկրորդ դեպքում՝ միևնույն առարկաներին (ինչ-

նախադասությունները, որպես կանոն, ունեն ենթակետային կամ երկեզր կառուցվածք. ինչպես ամեն մի հակադրություն, ժխտման ներհակությունը նույնպես պահանջում է հակադրության երկու եզր, երկու քեռու: Այդ եզրերի լեզվական արտահայտությունները դառնում են միավորյալ նախադասության անմիջական կազմիչները կամ բաղադրիչները, իսկ ժխտման հարաբերությունը՝ դրանց միջև գործառնող հիմնական հարաբերությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժխտման միավորյալ նախադասությունը ոչ միշտ է կազմված լինում երկու բաղադրիչներից: Հաճախ նրա եզրերից մեկն ունենում է բաղադրյալ կազմություն: Ավելին. չի բացառվում նաև երկու եզրերի միաժամանակյա բաղադրյալ լինելը: Երկու դեպքում էլ միավորյալ նախադասության մեջ, ժխտման հարաբերությունից բացի, առկա է նաև այլ հարաբերություն: Միևնույն կառուցվածքում համատեղված հարաբերությունները, սակայն, չեն գտնվում նույն մակարդակի վրա, չունեն գործառնական ու հաղորդակցական միևնույն դերն ու նշանակությունը: Ժխտման ներհակությունը, որպես բարդ նախադասության բաղադրիչների միջև գործառնող հարաբերություն, կազմում է ամենաբարձր աստիճանը, իսկ մյուս հարաբերությունները հանդես են գալիս այդ բաղադրիչներից մեկի կամ երկուսի ներսում՝ իբրև ստորին օղակում կամ օղակներում գործառնող հարաբերություններ: Ժխտման միավորյալ նախադասություններն ըստ բաղադրիչների կազմության բաժանում ենք երեք խմբի. ա) պարզ կազմությամբ բաղադրիչներով միավորյալ նախադասություններ, բ) մեկ բաղադրյալ եզրով միավորյալ նախադասություններ, գ) երկու բաղադրյալ եզրերով միավորյալ նախադասություններ:

Պարզ կազմությամբ բաղադրիչներով միավորյալ նախադասությունն այս կառուցվածքի ամենահիմնական ու պարզագույն տիպն է. ինչպես՝ «Դավիթն ու Արամը դասերից հետո չեն խաղում, այլ զբաղվում են արտադասարանային ընթերցանությամբ»:

Երկրորդ խմբի միավորյալ նախադասություններում բաղադրիչներից մեկն ունենում է պարզ, իսկ մյուսը՝ բաղադրյալ կազմություն: Ընդ որում, պարզ կազմությամբ եզրը ժխտման ներհակությամբ հակադրվում է բաղադրյալ եզրի բոլոր բաղադրիչ նախադասություններին միասին վերցրած: Բաղադրյալ եզրում, իբրև ստորին օղակում, գործառնող հարաբերությունները լինում են տարբեր: Առավել հաճախաբար միավորական հարաբերություն է: Բաղադրյալ եզրը լինում է թե՛ նախադաս և թե՛ վերջադաս: Օրինակ՝ «Ոչինչ չպատասխանեց (1) [I], երեսը շուտ տվեց պատին (2) և գլուխը թաքցրեց վերմակի տակ» (3) [II] (ԱՇ, 153):

«Եվ այս սեր կոչվածը գուցե սեր չէ բնավ (1) [I],

Այլ շչակի ձայն է (2), կայարանի աղմուկ (3)

Եվ կանացի ձեռք է՝ ճյուղի նման ջարդված» (4) [II] (ՊՍ, 1, 298):

պես՝ «Վարդանն ու Գողը գնացին որսի և վերադարձան ուշ երեկոյան»): Սրանք կառուցվածքային էական տարբերություններ չունեն և միավորվում են ենթական կամ ենթականեր բարդության բոլոր բաղադրիչ նախադասությունների համար ընդհանուր լինելու հիման վրա: Այստեղ կարևորը ոչ թե գործողությունների՝ մեկ կամ մեկից ավելի առարկաների կողմից կատարվելն է, այլ դրանց կատարման փաստի արձանագրումը:

Ինչ վերաբերում է բազմակի ենթականերով ու մեկ ստորոգյալով միավորված նախադասությանը (ինչպես՝ «Մենքուհը և Դավիթը գնացին դպրոց»), որի մեջ միևնույն հատկանիշը ստորոգյալում է տարբեր առարկաների, այն պարզ նախադասություն է, հավասարազոր բաղմակի լրացումներով պարզ նախադասությանը, որովհետև ունի մեկ ստորոգյալ, հետևաբար և մեկ ստորոգում: Նախադասության ստորոգումները մեկից ավելին են, եթե առարկային կամ առարկաներին վերաբրվում են տարբեր հատկանիշներ, իսկ դա գոյություն ունի միայն նախադասության՝ մեկից ավելի ստորոգյալներ ունենալու դեպքում: Անտարակույս, յուրաքանչյուր հատկանիշ կարող է արտահայտվել և առարկային վերադրվել առանձին բառական միավորով:

Այս կարգի շարահարական միավորյալ նախադասության մեջ հակադրվող բաղադրիչների միջև տրվող դադարը հաճախ տևական է լինում, որը գրավոր խոսքում արտահայտվում է միջակետով. ինչպես՝ «Մերունին լաց չեղավ. գնաց եկեղեցի, փովեց սալահատակին ու երկար աղոթեց որդու հոգու համար» (Սև, 273)։

Ժխտման ներհակության բաղադրյալ եզրի միավորները կարող են կապվել նաև հակասման հարաբերությամբ. ինչպես՝

«Գալիս եմ (1), բայց ոչ ուրախ երգեցի
 Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ (2) [I],
 Այլ դառն հեծության հառաչանքներով
 էդ անդընդախոր ձորերըդ լըցնեմ» (3) [II] (ՀԹ, 18)։

Որ կարելի է դիտել նաև իբրև երկանդամ պարբերույթ, որի գլխավոր մասը՝ առաջին եզրը, կազմված է հակասման հարաբերությամբ կապված երկու բաղադրիչ նախադասություններից, իսկ երկրորդ մասը առաջինին կապվում է ժխտման հարաբերությամբ։ Հետևաբար թե՛ իբրև պարբերույթ և թե՛ իբրև միավորյալ (և ընդհանրապես բարդ համադասական) նախադասություն նրա անմիջական կազմիչների միջև գործառվում է ժխտման հարաբերությունը։

Սակավադեպ էլ միավորյալ նախադասության բաղադրյալ եզրը կարող է լինել բարդ ստորադասական նախադասություն. ինչպես՝ «Պայծառ լուսի շողերը, անցնելով այդ մշուշի միջով, ծովի մակերևույթը չէին լուսավորում, այլ սփռում էին մի նուրբ շղարշով, որի ներքև նավերի անթիվ կայմերը ներկայացնում էին խորհրդավոր անառ» (ԱՇ, 239)։

Ինչպես նշեցինք, բաղադրյալ կազմություն կարող են ունենալ միավորյալ նախադասության նաև երկու եզրերը միաժամանակ։ Այս դեպքում հակադրության եզրերից յուրաքանչյուրի բաղադրիչներն իրար հետ կապվում են երկանդամ կամ բազմանդամ ստորոգյալների խմբավորումների ձևով։ Ընդամենը, ստորին օղակներում արտահայտվող հարաբերությունները լինում են նույնը կամ տարբեր։ Ըստ այդմ էլ թաղադրյալ ձգրերով միավորյալ նախադասությունները բաժանում ենք երկու ենթախմբի՝ ա) միևնույն հարաբերությամբ կապված բաղադրիչներով միավորյալ նախադասություններ և բ) տարբեր հարաբերություններով կապված բաղադրիչներով միավորյալ նախադասություններ։ Առաջին դեպքում միավորյալ նախադասության ստորին օղակներում ավելի հաճախ դործառվում է միավորական հարաբերությունը։ Թվարկում արտահայտող բաղադրիչ նախադասությունների երկու խմբերն իրար հետ կապվում են ժխտման ներհակությամբ. ինչպես՝ «Նա որոշել էր չհակառակել այլևս նրան (1), չգրգռել վիրավոր հոգին (2) [I], այլ խոնարհիլ (3) և հետը խոսել...» (4) [II] (ՄԳՄ, 123)։ Այստեղ ներհակության եզրերն ունեն հավասար ծավալ. երկուսն էլ կազմված են երկուական բաղադրիչ նախադասություններից։ Միավորական հարաբերությունը կարող է ունենալ նաև անհավասարաչափ ընդգրկում։ Այդ դեպքում հակադրության եզրերից մեկն ավելի շատ բաղադրիչ նախադասություններից է կազմված լինում. ինչպես՝ «Իսկական կարոտությունը դռնեդուռ չի ընկնում (1), ձայն չի հանում (2), չի գոռում (3) ու լալիս ուրիշների մոտ (4) [I], այլ միայն զդում է (5), միայն տառապում» (6) [II] (ԱՇ, 97)։

Տարբեր հարաբերություններով կապված բաղադրիչ նախադասություններով միավորյալ նախադասության ստորին օղակներում արտահայտվում են շարահյուսական տարբեր հարաբերություններ, որոնք կարող են ունենալ հավասար կամ անհավասար ընդգրկում՝ պայմանավորված հակադրության եզրերը բաղադրող նախադասությունների քանակով։ Առավել հաճախ համատեղում են հակասման և միավորական հարաբերությունները։ Օրինակ՝ «Տեսնե-

լով այս՝ Օլիմպիա թագուհին դողաց, չդիտես վախի՞ց, թե զարմանքից (1), բայց մնաց կանգնած, չկարողանալով ոչ առաջ գնալ, ոչ ետ (2) [I]։ այլ ասես շքնկնելու համար բռնեց հատակին հասնող կերպաս-վարագույրը (3) ու մի վալրկյան մնաց այդպես՝ աչքերը լայնաբաց ու դողդոջ (4), ապա մեկեն պոկվեց տեղից (5), շրջվեց (6) ու հեռացավ պինդ, փութկոտ քայլերով (7) [II] (ՍՋ, 229)։ Այս նախադասության մեջ հակասման հարաբերությունն արտահայտվում է առաջին եզրի երկու, իսկ միավորական հարաբերությունը՝ երկրորդ եզրի հինգ բաղադրիչ նախադասությունների միջև։

Այսպիսով, թեև քննված միավորյալ նախադասությունների բաղադրյալ կազմության մասնիչական կազմիչները կամ հակադրության եզրերն առանձին վերցրած բարդ համադասական կամ բարդ ստորադասական նախադասություններ են, այնուամենայնիվ դրանցից յուրաքանչյուրը կազմում է մեկ ամբողջություն և հակադրվում մյուս եզրին։ Հետևաբար ժխտման միավորյալ նախադասությունն ունի երկանդամ կամ երկկազմիչ կառուցվածք։

Ժխտման միավորյալ նախադասության կառուցվածքային առանձնահատկություններից մեկն էլ երկրորդ բաղադրիչ նախադասության ստորոգյալի օժանդակ բայի կամ հանգույցի զեղչումն է. ինչպես՝ «Անուշը և Վարդուհին ոչ թե երգում են, այլ արտասանում»։

Ժխտման հարաբերությամբ միավորյալ նախադասությունները կապակցվում են այլ, այլ ոչ թե, և ոչ թե, ոչ թե, ոչ թե... այլ, ոչ միայն... այլ շաղկապներով և շարահարությամբ։ Միավորյալ նախադասության իմաստային ու կառուցվածքային տարբեր առանձնահատկություններ պայմանավորող այդ շաղկապներից գործառական ևս առավել մեծ ակտիվություն ունի այլ-ը։

Շարահարական կառուցվածքի ժխտման միավորյալ նախադասություններն իրենց արտահայտած իմաստային փոխհարաբերություններով հիմնականում համապատասխանում են նույն նախադասությունների այլ շաղկապով տարբերակին։ Այդպիսիք երբեմն լինում են միակազմ։ Օրինակ՝ «Նրա բախտից հաշվապահ Զարգարյանն էլ այնտեղ չէր, գնացել էր փող բերելու» (ԱՇ, 96)։ «Երեսին մի մտիկ անի, բախտին մտիկ արած» (Ա, 297)։ Շարահարությամբ կապակցումն այս դեպքում էլ անձախ խիստ որոշակիորեն չի դրսևորվում բաղադրիչ նախադասությունների միջև գործառվող շարահարական հարաբերությունը։ Ընդսմին, շարահարական որոշ միավորյալ նախադասություններ գրեթե հավասարապես կարելի է ըմբռնել և՛ որպես ժխտման, և՛ որպես միավորական հարաբերությամբ կառույցներ. ինչպես՝ «Սմբատին չի նայում, խաղում է խելագարի պես, մերթ տալով, մերթ վերցնելով հարյուրանոցները» (ԱՇ, 73)։ Այս նախադասությունը կարող ենք փոխակերպել թե՛ այլ-ով, թե՛ և-ով կապակցված ձևի։ Հմտ. «Սմբատին չի նայում, այլ խաղում է խելագարի պես...»։ «Սմբատին չի նայում և խաղում է խելագարի պես...»։ Իհարկե, միշտ էլ գերիշխողը ժխտման հարաբերությունն է. անգամ և-ով կապակցված տարբերակում էլ այն մեծ շափով առկա է. և-ը տվյալ դեպքում ունի այլ-ի նշանակությունը։

Ժխտման ներհակությունը կարող է գործառվել միավորյալ նախադասության բաղադրիչների բոլոր անդամների միջև, բացի ենթակայից։ Այն ամենից առաջ արտահայտվում է երկկազմ կառուցվածքում ստորոգյալների, իսկ միակազմ կառուցվածքում՝ բայական գերադաս անդամների միջև։ Այդպիսի ժխտումը անվանում ենք ստորգծական։ Ժխտումը սահմանափակվում է միայն ստորոգյալների միջև, երբ միավորյալ նախադասության բաղադրիչները համառոտ են. ինչպես՝ «Հակոբն ու Սուրենը չեկան, այլ մեկնեցին»։ Ավելի հաճախ ստորոգյալները կամ բայական գերադաս անդամները հակադրվում են իրենց լրացումներով. օրինակ՝ «Կայծակը չլուսավորեց անտառը, այլ վայրկենական մի շող նետեց նրա վրա»։

Միավորյալ նախադասության մեջ ստորոգական ժխտումն արտահայտվում է տարբեր ձևով՝ պայմանավորված բաղադրիչ նախադասությունների ստորոգյալների արտահայտությամբ։ Պարզ և անվանական բաղադրյալ ստոր-

րողյալները հակադրվում են միատեսակ: Հմմտ. «Անուշը չզայրացավ ընկերուհու վրա, այլ հուզվեց»: «Դա երազ չէր, այլ դաժան իրականություն» (ԱՇԲ, 364): Ստորոգական ժխտումը այլ ձևով է դրսևորվում բայական բաղադրյալ ստորոգյալների միջև: Այս դեպքում առաջին ստորոգյալի եղանակիչ բայը, երկու բաղադրիչ նախադասությունների համար ընդհանուր լինելով, երկրորդ բաղադրիչում զեղչվում է՝ չստեղծելով հակադրության եզր, մինչդեռ անորոշ դերբայը երկրորդ բաղադրիչում փոխվում է՝ հակադրվելով առաջին ստորոգյալի անորոշ դերբային: Հետևաբար նման կառուցվածքում ստորոգական ժխտումը դործառվում է բայական բաղադրյալ ստորոգյալների դերբայական ձևերի միջև, ուստի այդ հակադրությունը պետք է դիտել որպես ստորոգյալների միջև գործառվող մասնակի ժխտման հակադրություն: Օրինակ՝ «Նա աշխատում էր ետ շմեալ ընկերներից, այլ լինել առաջավորների շարքում»:

Միավորյալ նախադասության մեջ ժխտման ներհակությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Ամենից առաջ այն կապվում է հականշության հետ: Այսպես՝ այն հաճախ պայմանավորված է լինում միավորյալ նախադասության ստորոգյալների կամ բայական գերադաս անդամների բառական հականշությամբ. ինչպես՝ «Ջարյանը ոչ թե հայ կյանքի պատկերներից բաժնեցավ դեպի գրականություն, այլ եվրոպական բանաստեղծությունից իջավ հայ կյանք» (ՎԳ, 42): Երբեմն առկա է լինում նաև քերական հակադրությունը՝ իբրև ներհակ ձևեր հանդես գալով միևնույն ստորոգյալի կամ բայական գերադաս անդամի հաստատական ու ժխտական ձևերը (իրենց լրացումներով հանդերձ). ինչպես՝ «Այդ խոսքերը չվիրավորեցին Որմիդուդուհանին, այլ վիրավորեցին Սամվելի մորը» (Բ, 93): Միավորյալ նախադասության մեջ սակավադեպ էլ զուգակցում են խոսքային հականշություն ու քերականական հակադրությունը. ինչպես՝

«Ինձ չես սիրում, ուրիշին.

Ուրիշին ես սիրում դու...» (ՎՏ, 109):

Այստեղ ինձ և ուրիշին ուղիղ խնդիրների միջև առկա է խոսքային հականշությունը, իսկ ստորոգյալների միջև՝ քերականական հակադրությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միավորյալ նախադասության մեջ ժխտման ներհակությունը միատարր չէ: Այն կարող է արտահայտվել հակադրվող բաղադրիչ նախադասությունների միևնույն կամ տարբեր անդամների միջև: Ժխտումը հակադրության երկու եզրերում կարող է ունենալ նույն կամ տարբեր ծավալը: Ըստ այդմ էլ ժխտումը, ինչպես ներհակության մյուս ձևերը, լինում է համասեռ ու անհամասեռ: Համասեռ ենք կոչում այն ժխտումը, որն արտահայտվում է միավորյալ նախադասության բաղադրիչների միևնույն անդամների միջև: Այսպիսի ժխտումը հիմնականում բնորոշ է երկբաղադրիչ կամ պարզ կառուցվածքի միավորյալ նախադասությանը. ինչպես՝ «Ոչ թե մոտեցավ, այլ հեռացավ»:

Միավորյալ նախադասության մեջ համասեռ ժխտումը հիմնականում լինում է մասնակի, որովհետև այս կառուցվածքում, ինչպես արդեն նշել ենք, ենթականների միջև գործառվող ժխտման հակադրությունը բացառվում է: Ժխտման բնույթը չեն փոխում առաջին բաղադրիչ նախադասության մեջ ընդհանուր անդամի գործառույթով հանդես եկող նաև մյուս անդամները. ինչպես՝ «Մարդիկ այլևս հոգ չէին տանում հանգցնելու, այլ շտապում էին փախչելու» (Բ. 288): Այստեղ հակադրության ժրից դուրս մտնող ենթական և այլևս ժամանակի պարագան ընդհանուր են նախադասության երկու բաղադրիչների համար, ուստի ամբողջ նախադասության մեջ առկա ժխտման հակադրությունը համասեռ է: Բերված նախադասությունն ունի (ենթակա + ժամանակի պարագա) + ստորոգյալ + նպատակի պարագա → ստորոգյալ + նպատակի պարագա կառուցվածքը: Այստեղ այլևս ժամանակի պարագայի գործածություն

ունի ոճական նշանակություն. այն շեշտում է ժխտվող և հաստատվող եղբայրությունների համաժամանակյա (ու համատեղ) գոյությունը՝ ավելի ուժեղացնելով բաղադրիչ նախադասությունների կապը²:

Այսպիսով, միավորյալ նախադասություն մեջ համասեռ ժխտումն արտահայտվում է, երբ հակադրվում են բաղադրիչ նախադասություններն իրենց բոլոր նույն անդամներով, ամբողջությամբ (բացառությամբ ընդհանուր անդամների):

Միավորյալ նախադասության մեջ համասեռ ժխտումն արտահայտվում է հետևյալ կաղապարներով, որոնցով, իհարկե, չի սահմանափակվում³.

ա) ՈՒՆ+Ստ կամ ԲԳԱ←→ՈՒՆ+Ստ. կամ ԲԳԱ. ինչպես՝ «Ինկետրականին չհարգես, ուսուցչին հարգիր»:

բ) (ենթ)+Ստ←→Ստ. ինչպես՝ «Դա ծառ չէ, այլ թուփ է»:

դ) ՁՊ+(ՈՒՆ)+ԲԳԱ←→ՁՊ+ԲԳԱ. ինչպես՝ «Ոչ թե պետք է մարդկանց շողորթությունամբ խաբել, այլ պետք է ազնվորեն համոզել»:

դ) Ստ կամ ԲԳԱ+Ո+ՈՒՆ←→Ստ. կամ ԲԳԱ+Ո+ՈՒՆ. օրինակ՝ «Մի ունեցիր հարուր դահեկան, ունեցիր երկու բարեկամ» (Ա, 225) և այլն:

Միավորյալ նախադասության մեջ ժխտումը կարող է գործառվել բաղադրիչ նախադասությունների նաև ոչ բոլոր անդամների միջև: Համատ. «Ծն երեկ քեզ չհանդիպեցի, այլ այսօր եմ ուղում հանդիպել»: «Ծն երեկ քեզ չպարոցում չհանդիպեցի, այլ այսօր եմ ուղում շտապ հանդիպել»: Եթե առաջին օրինակում ժխտման ներհակությունն առկա է ստորոգյալների ու դրանց լրացումների միջև, ապա երկրորդ օրինակում ժխտումը նույն անդամների միջև պահպանվում է, բայց նրա ոլորտից դուրս են տեղի(դարձում) և ձևի (շտապ) պարադաները: Բերենք մեկ այլ օրինակ. «Անշուշտ, սա ոչ թե սահմանափակության արգասիք է, այլ միտում» (ՎԳ, 189): Այս նախադասությունն ունի (ենթ.)+Հ+Ստ←→Ստ կառուցվածքը:

Ժխտման հարաբերությունն արտահայտվում է միավորյալ նախադասության բաղադրիչների նաև տարբեր անդամների և կամ էլ տարբեր կառուցվածքի բաղադրիչ նախադասությունների միջև: Այսպիսի ժխտումն անվանում ենք անհամասեռ ժխտում: Վերջինս արտահայտվում է.

1. Երբ միավորյալ նախադասության բաղադրիչներից մեկը համառոտ է, մյուսը՝ ընդարձակ, կամ երբ մեկը պարզ է, մյուսը՝ բարդ, այսինքն՝ երբ «տրամաբանական երկու հակադիր երևույթներն արտահայտվում են բառաքերականական անհավասար միջոցներով»⁴: Օրինակ՝ «Արամն ու Սուրենը պատմողին այլևս չէին լսում, այլ հեռացել էին»: «Նա աշխատում էր չկորցնել գիշերային խավարը, այլ մթնով դուրս գալ յուր իշխանության սահմանից, որը արևելյան կողմից շատ հեռու չէր» (Բ, 325):

2. Երբ գործառվում է միավորյալ նախադասության բաղադրիչների տարբեր անդամների միջև: Այսպիսի անհամասեռ ժխտում են արտահայտում հետևյալ կառուցվածքները.

² Համատ. Ն. Պառնասյան, Անշուշտ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում («Ընդլի» և ուրիշ հարցեր, հ. 2, Երևան, 1964, էջ 57):

³ Այստեղ և այսուհետև կաղապարի ամեն մի անդամ ներկայացվում է տվյալ օրինակում իր շարահատության համապատասխան: Տեղի խնայողության պահանջով կաղապարի անդամները ներկայացվում ենք համառոտագրությամբ. ենթ-ենթակա, Ստ-ստորոգյալ, ԲԳԱ-բայական գերեզս անդամ, ԱԳԱ-անվանական գերադաս անդամ, Ո-որոշիչ, Հ-հատկացուցիչ, ՈՒՆ-ուղիղ խնդիր, ՄԻ-միջոցի խնդիր, ԱԻ-անշատման խնդիր, ՀԻ-հանգման խնդիր, ՍԻ-սահմանափակման խնդիր, ՎԻ-վերաբերության խնդիր, ՆԻ-ներգործման խնդիր, Տպ-տեղի պարագա, ԺՊ-ժամանակի պարագա, ԶՊ-ձևի պարագա, ԶՊ-չափի պարագա, ՆՊ-նպատակի պարագա և այլն: Ընդհանուր անդամներն առնվում են փակագծերի մեջ:

⁴ Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բադիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 585:

ա) $(N + \text{ենթ.}) + N + \text{Հն} + \text{Ստ} \leftarrow \rightarrow N + \text{իս} + \text{Ստ}$. ինչպես՝ «Ուրեմն, զայրացած երիտասարդ մարդիկ ոչ թե հասարակական անարդարությունների վրա էին ղայրացած, այլ բաժին էին ուղղում» (ՎՊ, 54):

բ) $\text{Ստ} + (\text{ենթ.}) \leftarrow \rightarrow \text{Ստ} + \text{Ձ} + \text{Ձ}$. ինչպես՝ «Զմեռան նրանք, այլ սպանվեցին՝ լեզենն առ լեզենն, փաղանգ առ փաղանգ» (ՊՍ, 4, 469):

գ) $(\text{ենթ.}) + \text{Ստ} + \text{Հն} \leftarrow \rightarrow \text{Ձ} + \text{Ձ} + \text{Ձ} + \text{Ստ}$. ինչպես՝ «Մեծ Տիկինը շնայեց նրան, այլ գլուխը կախած, մտասույզ ու լուրջ բարժվեց դեպի կանանց դուռը» (ԴԴ, 505):

դ) $(N + N + \text{ենթ.}) + \text{Ձ} + \text{Ստ} \leftarrow \rightarrow \text{Հ} + N + \text{Ստ}$. ինչպես՝ «Սուվից հյուծված, մարդկային կերպարանքները կորցրած այդ ամբոխն այլևս զորք չէր, այլ ուրվականների մի անկանոն խումբ» (ՍԽ, 393):

ե) $(\text{Պ} + \text{ենթ.}) + \text{Ձ} + \text{Ստ} + N + \text{իս} \leftarrow \rightarrow \text{Ստ} + \text{Ձ}$. օրինակ՝ «Այս մտքերով տարված՝ Կամարյանը գրեթե չէր մասնակցում հացկերույթին, այլ միայն կրկնում էր մեքենայաբար» (ՍԶ, 21):

զ) $(N + \text{ենթ.}) + \text{Ստ} \leftarrow \rightarrow \text{Ստ} + N + \text{Հ} + N$. օրինակ՝ «Դիսերտացիոն աշխատանքները չսկսեց է լինեն ինքնանպատակ, այլ պետք է լինեն գիտական հետադոտությունների տրամաբանական ամփոփում» (ԺԺ, 431):

է) $(\text{ենթ.}) + \text{Ստ} \leftarrow \rightarrow \text{Ձ} + \text{Ստ} + N + \text{Հն}$. ինչպես՝ «Նա ոչ միայն չմոտեցավ, այլ բնավ ուշադրություն չդարձրեց չարաբաստիկ օղերին» (ՆԴ, 311):

ը) $(\text{Հ} + \text{ենթ.}) + \text{Ստ} + \text{Հն} \leftarrow \rightarrow \text{Ստ} + N + \text{Հն}$. օրինակ՝ «Քո խոսքերը չազդեցին նրա վրա, այլ ազդեցին ինձ մոտ կանգնած մարդկանց վրա»:

թ) $(N + \text{ենթ.}) + \text{Ստ} + N + \text{Հն} \leftarrow \rightarrow \text{Ստ} + \text{Վն}$. ինչպես՝ «Սրանց արտահայտած դործողությունը կապվում է ոչ թե որևէ դեմքի հետ, այլ վերաբերում է ընդհանուրին» (ԺՀ, 161) և այլն:

Ինչպես տեսնում ենք, ժխտման հարաբերությամբ միավորյալ նախադասության ամենաբնորոշ առանձնահատկությունը ժխտման ներհակության դրսևորումն է: Դա էլ պայմանավորում է միավորյալ նախադասության կառուցվածքային հիմնական յուրահատկությունը՝ բաղադրիչներից մեկի ժխտական և մյուսի հաստատական, իսկ սակավադեպ էլ երկու բաղադրիչների ժխտական լինելը: Ըստ այդմ էլ ժխտման միավորյալ նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ ա) մեկ հաստատական և մեկ ժխտական բաղադրիչ նախադասություններով միավորյալ նախադասություններ և բ) երկու ժխտական բաղադրիչ նախադասություններով միավորյալ նախադասություններ: Առաջին խմբի միավորյալ նախադասությունները նույնպես միատարր չեն՝ պայմանավորված հաստատական և ժխտական բաղադրիչների շարադասությամբ: Ժխտական բաղադրիչի նախադաս կամ հետդաս լինելը կարևոր է թե՛ կառուցվածքային և թե՛ իմաստային առումով: Ժխտական բաղադրիչը միաժամանակ պայմանավորում է բաղադրիչ նախադասությունների համապատասխան կապակցումը (շաղկապական, շարահարական), իսկ վերջինս էլ՝ ժխտական բաղադրիչի տրամաբանական շեղումից անդամի շարադասությունը (տրամաբանական շեղում մեծ մասամբ ընկնում է ստորոգյալի վրա): Ավելի հաճախ ժխտական է լինում միավորյալ նախադասության առաջին բաղադրիչ նախադասությունը: Այսպիսի ժխտումն արտահայտվում է.

1. ստորոգյալի ժխտական բնույթով: Այս դեպքում միավորյալ նախադասությունը կապակցվում է.

ա) այլ շաղկապով ու շարահարությամբ: Ժխտվում է առաջին բաղադրիչ նախադասության բովանդակությունը, և հաստատվում է երկրորդ բաղադրիչի բովանդակությունը. ինչպես՝ «Նրանք չգնացին զբոսանքի, այլ վերադարձան տուն»: Այս կարգի միավորյալ նախադասությունը երբեմն լինում է միակազմ՝ հանգես քալով իբրև առած կամ ասացվածք. ինչպես՝ «Մի՛ լինիր ուրազի պես՝ միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ, այլ եղի՛ր սղոցի պես՝ մին դեպի քեզ, մին դեպի մեզ» (ՀԹ, 1, 232):

Ակնհայտ է, որ միավորյալ (և ոչ միայն միավորյալ) նախադասության մեջ հաճախ այլ շաղկապը զորացվում է ընդհակառակն (ը) միջանկյալ բա-

ռով, որով ավելի է շեշտվում հակադրությունը⁵։ Ինչպես՝ «Նա մեզ չի միացել, այլ, ընդհակառակն, բոլորովին ռդիչ դիրքորոշում է ընտրել»։ XIX դ. մեր արձակում հանդիպող նման կառուցվածքում նկատելի է ընդհակառակն եղանակավորող բառի՝ միջանկյալ բառի գործառույթով հանդես գալու դեռևս կայունացած շինելը։ Այդ պատճառով էլ շատ հեղինակների մոտ այն կե-տադրված է։ Ինչպես՝ «Որդեսեր և հավատացյալ մայրը, որքան էլ առողջ ոտերն ունենա, այնուամենայնիվ յուր հետևից քարշ չի տալ մանուկին, այլ ընդհակառակն կհարմարեցնի յուր քայլերը տղայի դողողուն քայլիկներին» (Մուր., 42)։ Պետք է նշադրել, որ մեծանուն հայագետ Մ. Արեղյանը ընդհակառակն-ի, իբրև միջանկյալ բառի, գործածության կայունացած շինելն է հիմք ընդունել, երբ այլ ընդհակառակն-ը դիտել է իբրև մեկ շաղկապ⁶։ Այժմ արդեն օրինաչափականը տվյալ դեպքում ընդհակառակն-ի, իբրև միջանկյալ բառի, երկկողմյա տրոհումն է։

բ) ոչ միայն ...այլ տարանդամ զուգաշաղկապով, որի առաջին բաղադրիչը, որպես կանոն, գործածվում է միավորյալ նախադասության առաջին բաղադրիչ նախադասության ժխտում արտահայտող անգամից (հիմնականում ստորոգյալից) առաջ։ Այս դեպքում միավորյալ նախադասության առաջին մասում ժխտվում է մի բան, որի գոյությունը կամ որի կատարումը, սակայն, ինչ-որ չափով սպասելի էր, իսկ նախադասության երկրորդ մասում հաստատվում է առաջին մասում սպասված միանգամայն հակառակ դրու-թյունը, հակառակ վիճակը⁷։ Ինչպես՝ «Նա այդ դեպքից ոչ միայն չհուզվեց, այլ ուրախացավ»։ Նմանապես ոչ միայն... այլ շաղկապի երկրորդ բաղադրիչին երբեմն հաջորդում է ընդհակառակն բառը, որը ժխտման ներհակու-թյունը ավելի է շեշտում։ Ակնհայտ է, որ այս դեպքում միջանկյալ բառի գոր-ծառույթով ընդհակառակն-ի հանդես գալն ավելի է կայունացել։ Նույնիսկ Մուրացանի մոտ, ուր այլ-ով կապակցված միավորյալ նախադասության մեջ ընդհակառակն բառը տրոհված է, հանդիպում ենք դրա տրոհմանը։ Ինչպես՝ «Կաթողիկոսի վարմունքը ոչ միայն չուսահատեցրեց, այլ, ընդհակառակն, ավելի ևս ոգևորեց նրան յուր մտադրությունն առաջ տանելու» (Մուր., 241)։

2. Ոչ թե ...այլ տարանդամ զուգաշաղկապի առաջին բաղադրիչով՝ ոչ թե-ով, որը համարժեք է ժխտական ստորոգյալի -չ մասնիկին և օժանդակ բայի ժխտական ձևերին։ Տվյալ դեպքում կարևոր է ոչ թե-ի շարադասությու-նը միավորյալ նախադասության առաջին բաղադրիչում։ Այն, որպես կանոն, դրվում է հիմնականում ժխտող անդամից կամ անդամներից առաջ։ Այդ շաղկապի այլ բաղադրիչն էլ միշտ գործածվում է երկրորդ բաղադրիչ նախա-դասության սկզբում։ Օրինակ՝ «Սաղարթախիտ ծառերը, երփներանգ ծաղիկ-ները ոչ թե օրորվում էին ամառվա թեթև հովից, այլ երաշտից ցած էին հա-ռել իրենց գլուխները»։

Տրամաբանական շեշտով պայմանավորված՝ ժխտման ներհակությունն ընդգծվում է, երբ ժխտող անդամը ոչ թե շաղկապական բաղադրիչի հետ գոր-ծածվում է առաջին բաղադրիչ նախադասության մեջտեղը կամ վերջում։ Ինչ-պես՝ «Արամն ու Վարդանը այդ օրը ոչ թե դիտավորյալ նեղացրին իրենց ըն-կերոջը, այլ անգիտակցորեն սխալ գործեցին»։ Նման ժխտումն ունի ճշգրտող բնույթ։

Միավորյալ նախադասության մեջ ոչ թե ...այլ շաղկապի ոչ թե բա-ղադրիչի փոխարեն սակավադեպ գործածվում է ոչ ձևը⁸, որն ավելի շատ տա-րածված էր գրաբարում և նվազ չափով՝ միջին հայերենում։ Դա հանդիպում է

⁵ Գ. Գաբրիելյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 140։

⁶ Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 666։

⁷ Մ. Գ. Արարատյան, 9թեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 436։

⁸ Հմմտ. Գ. Գաբրիելյան, Նշվ. աշխ., էջ 141։

մասնավորապես այն դեպքում, երբ միավորյալ նախադասության առաջին եզրը հակասման հարաբերությանը երկբաղադրիչ համադասական կապակցություն է. ընդ որում, ոչ-ը հանդես է գալիս այդ եզրի կամ անմիջական կազմիչի երկրորդ բաղադրիչում, իսկ հակասման շաղկապը տվյալ դեպքում կարծես փոխարինում է զեղչված թե-ին. ինչպես՝ «Հայկն ու Գուրգենը հանդիմանում էին իրենց ընկերոջը, բայց ոչ հակակրանք դրսևորում նրա նկատմամբ, այլ պարզապես ցանկանում էին նրան ուղղել»:

Միավորյալ նախադասության առաջին բաղադրյալ անդամի յուրաքանչյուր բաղադրիչի սկզբում ոչ-ը կարող է կրկնվել՝ ստեղծելով ո՛չ... ոչ... այլ (նաև՝ ո՛չ... և ո՛չ... այլ) շաղկապը: Այս դեպքում ժխտման ներհակությունը մասամբ թուլանում է. ինչպես՝ «Ո՛չ խոսում է, ո՛չ գրում, այլ պարզապես մտորում է»:

Ժխտման հակադրությունն ավելի է ընդգծվում, երբ միավորյալ նախադասության երկրորդ բաղադրիչում, այլ-ից հետո, գործածվում է ընդհակառակն բառը, որն այս դեպքում ավելի շատ է դրսևորում ոչ թե... այլ շաղկապին (ավելի ճիշտ՝ նրա այլ բաղադրիչին) ձուլվելու միտում: Այդ է պատճառը, որ Վ. Առաքելյանը ոչ թե... այլ ընդհակառակն-ը դիտում է իբրև առանձին շաղկապ և այն տարբերակում ոչ թե... այլ-ից⁹: Օրինակ՝ «Ոչ թե չեմ ցանկացել աշխատանքս ավարտել, այլ ընդհակառակն շատ եմ ձգտել»: Ավելացնենք, որ ոչ թե... այլ շաղկապով կապակցված միավորյալ նախադասության մեջ սակավադեպ էլ ժխտվում է ստորոգյալի որևէ հատկանիշը: Դա առկա է մասնավորապես այն դեպքում, երբ առաջին բաղադրիչ նախադասության մեջ ոչ թե շաղկապական բաղադրիչին հաջորդում է ահմանափական եղանակավորող բառ (սոսկ, միայն և այլն), որպիսի դեպքում նախադասությունը բաղադրված է լինում մեծ մասամբ անվանական ստորոգյալներով, ինչպես՝ «Դա ոչ թե սոսկ քաղաք էր, այլ մի յուրօրինակ թանգարան...» (Թնժ, 297):

Ինչպես նշեցինք, հավասարապես ժխտման կարող է լինել միավորյալ նախադասության նաև երկրորդ բաղադրիչը: Մ. Աբեղյանը նման կառուցվածքի բարդ համադասական նախադասությունները դիտում է իբրև շուտ տված ձևով արտահայտված ժխտական կապակցություններ¹⁰, որոնցում հաստատվում կամ ընդունելի է դիտվում առաջին բաղադրիչի բովանդակությունը: Այսպիսի միավորյալ (և ընդհանրապես բարդ համադասական) նախադասության կազմում կապակցման բառական միջոցի դերով հանդես են գալիս ոչ թե, և ոչ թե, այլ ոչ թե բաղադրյալ շաղկապները, որոնք, իրական կանոն, գործածվում են երկրորդ բաղադրիչի սկզբում: Ընդ որում, այս շաղկապներից յուրաքանչյուրով կապակցվելիս միավորյալ նախադասությունը ստանում է ժխտման ներհակության արտահայտման ոճական տարբեր յուրահատկություններ: Այսպես՝ այլ ոչ թե-ով կապակցվելու դեպքում միավորյալ նախադասության ժխտման ներհակության իմաստը շատ ավելի է ընդգծվում: Նմանապես ոչ թե-ով կապակցված միավորյալ նախադասության մեջ ժխտման իմաստն ավելի զորեղ է, քան և ոչ թե-ով կազմվածի մեջ, որովհետև վերջին շաղկապի և բաղադրիչը մասամբ մեղմացնում է ներհակության իմաստը: Հմմտ. «Նա ամբողջ օրը թափառում է, այլ ոչ թե աշխատում»: «Նա ամբողջ օրը թափառում է, ոչ թե աշխատում»: «Նա ամբողջ օրը թափառում է և ոչ թե աշխատում»:

Ոչ թե, և ոչ թե, այլ ոչ թե շաղկապներով կապակցված միավորյալ նախադասությունները համանիշ են նույն նախադասությունների՝ ոչ թե... այլ, այլ շաղկապներով կազմված ձևերին: Սա շարահյուսական համանիշության հետաքրքրական դրսևորումներից մեկն է: Հմմտ. «Ազատ ժամերիդ օգնիր ծնողներիդ, այլ ոչ թե (ոչ թե, և ոչ թե) ժամանակդ ավելորդ վատնիր»→«Ժամա-

9 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Կ. Ռ, Երևան, 1964, էջ 342.

10 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 666:

նակդ ավելորդ չվատնես, այլ ազատ ժամերիդ օգնիր ծնողներին, «Ոչ թե ժամանակիդ ավելորդ վատնիր, այլ ազատ ժամերիդ օգնիր ծնողներին» և այլն: Այս համանիշ ձևերի տարբերությունը ոճական է, վերաբերմունքային:

Ժխտական կարող են լինել միավորյալ նախադասության նաև երկու բաղադրիչները միաժամանակ: Այսպիսի կառուցվածքները բաժանվում են երկու ենթախմբի.

ա) միավորյալ նախադասություններ, որոնց երկու բաղադրիչներն արտահայտում են ժխտում: Նման ժխտումն անվանում ենք կրկնակի ժխտում: Այս դեպքում միավորյալ նախադասությունը կապակցվում է ոչ միայն... այլ շաղկապով, որն այս կառուցվածքում մասամբ համարժեք է ոչ միայն... այլև շաղկապին. ինչպես՝ «Նա ոչ միայն չեկավ մեզ մոտ, այլ նույնիսկ չտաքերեց մեզ»: Այսպիսի միավորյալ նախադասությունները համանիշ են ո՛չ... ո՛չ (ո՛չ... և ո՛չ, ո՛չ... և ո՛չ էլ) միավորիչ շաղկապով կապակցված միավորյալ նախադասություններին, այն տարբերությամբ, որ առաջինները ժխտման, իսկ վերջինները միավորական հարաբերությամբ միավորյալ նախադասություններ են: Հմմտ. «Նա ո՛չ եկավ մեզ մոտ, ո՛չ նույնիսկ մտաքերեց մեզ»:

բ) ձևական ժխտումն ու բուն ժխտումը համատեղող միավորյալ նախադասություններ, որոնց բաղադրիչներից մեկի ժխտումն ունի ձևական նշանակություն, ժխտական ձևով հաստատում է հատկանշի առկայությունը, իսկ մյուսն ունի ժխտական նշանակություն: Ընդամին, ձևական ժխտումն առաջին բաղադրիչով արտահայտվելու դեպքում նախադասությունը կապակցվում է ոչ թե... այլ շաղկապով, իսկ երկրորդ բաղադրիչով արտահայտվելու դեպքում՝ ոչ թե, այլ ոչ թե, և ոչ թե շաղկապներով: Հմմտ. 1. «Արամը ոչ թե չի եկել, այլ գիրքը չի բերել»: 2. «Արամը դիրքը չի բերել, այլ ոչ թե չի եկել»: Այս նախադասությունները համանիշ են «Արամը եկել է, բայց գիրքը չի բերել» կառույցին: Դրանք իմաստով նույնն են, իսկ քերականական կառուցվածքով՝ տարբեր. այն է՝ միևնույն ներհակական կապակցության տարբեր դրսևորումներ են. առաջինները ժխտական, իսկ վերջինը հակասման հարաբերությամբ միավորյալ նախադասություններ են:

Այսպիսով, ժխտման հարաբերությամբ միավորյալ նախադասությունը բարդ համադասական նախադասության ինքնատիպ դրսևորումներից է, որի ուսումնասիրությունն ունի սոսակական ու գործնական կարևոր նշանակություն:

ՀԱՄԱՌՈՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա—Ա. Ղանալանյան, Հայկական առածանի, Երևան, 1960:

ԱԲ—Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1955:

ԱԸ—Ա. Շիրվանզադե, Քաոս, Երևան, 1976:

ԴԴ—Դ. Դեմիրճյան, Վարդանանք, հ. 2, Երևան, 1968:

ԹՆԺ—Ա. Ամիրյան, Տ. Էլոյան, Հ. Մխիթարյան, Թելադրության նյութերի ժողովածու, Երևան, 1977:

ԺԺ—Հայկական ՍՍՀ ...ժամանակագրական ժողովածու, հ. 9, Երևան, 1966:

ԺՀ—Ս. Կ. Արբահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բաղդկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1974:

ՀԹ—Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1950, Ընտիր երկեր, Երևան, 1978:

ՄԳՄ—Մուրացան, Քեղոզ Մարզպետունի, Երևան, 1977:

Մուր.—Մուրացան, Երկեր, հ. 2, Երևան, 1951:

ՆԴ—Նար-Դոս, Երկեր, Երևան, 1977:

ՊՍ—Պ. Սևակ, Երկեր, հ. 1, 4, Երևան, 1972, 1973:

ՍԶ—Սո. Ջորյան, Երկեր, հ. 6, Երևան, 1962:

ՍԽ—Ս. Խանզադյան, Երկեր, հ. 3, Երևան, 1968:

ՎՔ—Վ. Քարբեկյան, Դիմանկարներ, Երևան, 1977:

Վ.Պ.—Վ. Պետրոսյան, Հազասարում բազմաթիվ անհայտներով, Երևան, 1977:

ՎՏ—Վաչան Տերյան, Երկեր, հ. 1, Երևան, 1960:

Ր—Րաֆֆի, Երկեր, հ. 7, Երևան, 1953:

СЛИТНОЕ ПРЕДЛОЖЕНИЕ С ОТРИЦАТЕЛЬНЫМ ОТНОШЕНИЕМ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

АНДРАНИК КАРАПЕТЯН

Резюме

Сложносочиненное предложение с общим подлежащим рассматривается нами как слитное предложение. Отрицательным слитным предложением с отрицанием выражается отрицание одного или нескольких признаков (приписываемых предмету или предметам) или утверждение того или другого. Эти предложения бывают односоставными и двусоставными.

Слитные предложения с отрицанием имеют двучленное или двусоставное строение. Они соединяются при помощи союзов *а (ալլ), -а не (ալլ ոչ թե, և ոչ թե), не..., а (ոչ թե..., ալլ), не только..., но и (ոչ միայն... ալլ)* и бессоюзным подчинением.

Отрицание с противительными отношениями может быть выражено в двусоставном построении сказуемых, а в односоставном построении—посредством главных глатольных членов. Такое отрицание называем предикативным отрицанием. Последнее выражается разными формами, обусловленными сказуемыми составных предложений.

В слитном предложении дифференцируются два выражения отрицания: однородное и неоднородное. Предложения с отрицанием разделяются на две группы: а) с одним утвердительным и с одним отрицательным составными предложениями; б) с двумя отрицательными составными предложениями.